

Հավելված  
Հաստատված է  
ՀՀ հանրային ծառայությունները  
կարգավորող հանձնաժողովի  
2004 թվականի ապրիլի 14-ի  
№ 40L որոշմամբ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2003 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ**

**Ներածություն**

2003 թվականի մարտի 31-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված „Էներգետիկայի մասինե ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասինե ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը վերանվանվել է Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողով, իսկ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասինե ՀՀ օրենքով հանձնաժողովին վերապահվել են նաև ջրային համակարգի կարգավորման իրավասությունները։ 2003 թվականի դեկտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված „Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասինե ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը վերանվանվել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ նրան վերապահելով նաև հեռահաղորդակցության բնագավառի կարգավորումը։ Համաձայն այս օրենքի՝ հեռահաղորդակցության բնագավառի կարգավորման՝ հաձնաժողովի իրավասությունն ուժի մեջ կմտնի, Էլեկտրոնային հաղորդակցության մասինե ՀՀ օրենքի ընդունումից հետո։

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2003 թվականին գործել է հետևյալ կազմով։

Ռոբերտ Նազարյան՝	հանձնաժողովի նախագահ
Նիկոլայ Գրիգորյան՝	հանձնաժողովի նախագահի տեղակալ
Շիրազ Կիրակոսյան՝	հանձնաժողովի անդամ
Ռոբերտ Խարազյան՝	հանձնաժողովի անդամ
Սամվել Արաբաջյան՝	հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով (55 աշխատող, այդ թվում 12-ը՝ վարչատնտեսական), որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
  - ա) սակագնային բաժին,
  - բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- վարչատնտեսական բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

2003 թվականի դեկտեմբեր ամսից հանձնաժողովն իր գործունեությունը շարունակում է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության և Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ կապիտալ վերանորոգված Սարյան 22 շենքում, որտեղ ստեղծված են միջազգային նորմերին համապատասխանող աշխատանքային բոլոր պայմանները հանձնաժողովի արդյունավետ աշխատանքը կազմակերպելու համար:

Հանձնաժողովի՝ որպես կարգավորող մարմնի, հիմնական գործառույթներն են.

#### 1. Էներգետիկայի բնագավառում.

ա) գործունեության լիցենզավորում, լիցենզիայի պայմանների սահմանում և դրանց վերահսկում,

բ) գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև, ինչպես նաև սպառողների հետ կնքվող էներգիայի և(կամ) բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանում, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցում,

գ) էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի, էներգետիկայի բնագավառում հաղորդման, բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի ծառայությունների մատուցման կարգավորվող սակագների սահմանում,

դ) Էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման ու օգտագործման կանոնների սահմանում,

Ե) իր իրավասությունների շրջանակում իրավական ակտերի սահմանում և դրանց կատարման վերահսկողություն,

Գ) սպասարկման որակի նկատմամբ ընկերություններին ներկայացվող պահանջների սահմանում,

Է) գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրում և սակագներում ներդրումների լրիվ կամ մասնակի ներառման վերաբերյալ որոշումների ընդունում,

Ը) ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատվությունների վերլուծություն և գնահատում:

## 2. Զրային համակարգում.

ա) սակագնային քաղաքականության իրականացում,

բ) ոչ մրցակցային ջրամատակարարմներին ջրային համակարգերի օգտագործման թույլատվության տրամադրում:

3. Հեռահաղորդակցության (Էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում, ինչպես վերը նշվեց, հանձնաժողովի գործառույթները կիստակեցվեն, Էլեկտրոնային հաղորդակցության մասինե ՀՀ օրենքի ընդունումից հետո:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա վերջին Ազգային ժողովում հրապարակում է հաջորդ տարվա իր գործունեության ծրագրը, որը ներառում է ինչպես կարգավորման օրենսդրական և նորմատիվային դաշտի բարելավման և շուկայի կառուցվածքի կատարելագործման խնդիրները, այնպես էլ հանձնաժողովի գնահատականները սակագնային քաղաքականության ուղղությունների և միտումների վերաբերյալ:

Գործունեության ծրագրի կատարումն ապահովելու համար հանձնաժողովը մշակում և հաստատում է տվյալ տարվա աշխատանքային ծրագիր և ժամանակացույց՝ ըստ ստորաբաժանումների: Ստորև շարադրված են հանձնաժողովի 2003 թվականի աշխատանքային ծրագրի հիմնական ուղղությունները և կատարման արդյունքները:

## **Կարգավորման իրավական դաշտի կատարելագործում**

Հանձնաժողովի 2003 թվականի գործունեության կարգավորման կարևորագույն ուղղություններից է անմիջական մասնակցությունը մեկ միասնական կարգավորող մարմնի ստեղծման և զարգացման հետ կապված օրենսդրական

դաշտի ձևավորման աշխատանքներին: Մրցույթով ընտրված միջազգային հեղինակավոր «Econ One Research, Inc.» խորհրդատվական ընկերության աջակցությամբ մշակվել, բոլոր շահագրգիռ կազմակերպությունների ներգրավմամբ քննարկվել և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2003 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունվել են՝

1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին»,
2. «Եներգետիկայի մասին ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին»,
3. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
4. «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին»,
5. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի նպատակը մեկ միասնական կարգավորող մարմնի գործունեության օրենսդրական կանոնակարգումն է: Այս օրենքի հիմքում դրված է «Եներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածների տրամաբանությունը՝ հաշվի առնելով էներգետիկայի, ջրային համակարգի և հեռահաղորդակցության առանձնահատկությունները: Օրենքում ամրագրվել է նաև հանձնաժողովի ֆինանսավորման սկզբունքներն ու նոր մեխանիզմ, որը ապահովում է կարգավորող մարմնի ֆինանսական ինքնուրույնությունը:

«Եներգետիկայի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները հիմնականում պայմանավորված են մեկ միասնական կարգավորող մարմնի մասին առանձին օրենքի ընդունմամբ: Միաժամանակ, օրենքը լրացվել է հանձնաժողովի բնականոն գործունեության համար անհրաժեշտ որոշ իրավասություններով (սակագների հաշվարկման մեթոդիկայի, շահութաբերության, մաշվածության նորմաների սահմանում և այլն), որոնց բացակայությունը խոչընդոտում էր սակագնային քաղաքականության լիարժեք իրականացումը: Բացի այդ, այն միտված է խթանելու միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից հանրապետությունում ջերմամատակարարման լոկալ համակարգերի զարգացման ներդրումային ծրագրերի իրականացումը: Օրենքում ամրագրված է դրույթ, որի համաձայն ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման

գործունեություննը չեն լիցենզավորվում, և դրանց համար սակագներ չեն սահմանվում, եթե այդ համակարգերի դրվածքային հղորությունը չի գերազանցում 5,8 ՄՎտ-ն:

Զրային օրենսգրքում կատարված փոփոխությունները հիմնականում նպատակառուղղված են թույլտվությունների տրման և սակագների սահմանման գործընթացների հստակ տարանջատմանը, որի բացակայությունը խոչընդոտում էր սակագների սահմանումն ու վերանայումը որպես կարգավորման ինքնուրույն մեխանիզմի կիրառումը: Միաժամանակ, թույլտվությունները պայմանագրային դաշտից տեղափոխվել են վարչական իրավունքի դաշտ, նկատի ունենալով, որ հանձնաժողովը պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում ոչ թե կարգավորվող անձանց հետ, այլ թելադրում է գործունեության պարտադիր կատարման պայմաններ: Ելնելով էներգետիկայի բնագավառի կարգավորման փորձից, օրենսգրքում հստակեցվել է նաև սակագների սահմանման և վերանայման գործընթացը՝ հայտի ընդունումից մինչև հանձնաժողովի որոշման ընդունումը:

«Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» << օրենքում կատարված փոփոխությամբ հանձնաժողովը, մնալով «Քաղաքացիական ծառայության մասին» << օրենքի գործողության շրջանակում, դուրս է բերվել «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» << օրենքի դաշտից՝ վերացնելով հանձնաժողովի աշխատակազմի արդյունավետ կառուցվածքի ձևավորման և աշխատակազմը որակյալ մասնագետներով համալրման խոչընդոտները:

Քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությամբ հրապարակային պայմանագրեր սահմանելու գործառույթը վերապահվել է նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

Համաձայն «Էներգետիկայի մասին» << օրենքի, 2003 թվականին հանձնաժողովը մշակել է կարգ, որը կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց կողմից «Էներգետիկայի մասին» և «Լիցենզավորման մասին» << օրենքների պահանջները խախտելու, հանձնաժողովի իրավական ակտերը, լիցենզիայի պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքերում հանձնաժողովի կողմից խախտումները վերացնելու վերաբերյալ հանձարարականների տրման և տույժերի կիրառման գործընթացը:

Հանձնաժողովի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով 2003 թվականի ընթացքում մշակվել և հաստատվել են մի շարք լոկալ իրավական ակտեր:

«Հայէներգո» ՓԲԸ-ի վերակազմակերպման արդյունքում նրա կազմից «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի առանձնացումը առաջընթաց քայլ է էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքի բարելավման ուղղությամբ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, հանձնաժողովը մշակել է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման պայմանագրի օրինակելի ձևը, որի համաձայն էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված անձինք պայմանագրով համակարգի օպերատորին տալիս են համակարգի կառավարման համար անհրաժեշտ լիազորություններ, ինչն ուղղակիորեն անդրադառնում է համակարգի հուսալիության և անվտանգության բարձրացման վրա:

2003 թվականի ընթացքում հանձնաժողովն իրականացրել է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի առուվաճառքի /ծառայությունների մատուցման/ 92 պայմանագրերի փորձաքննություն և գրանցում, որոնց նպատակն է պաշտպանել սպառողների շահերը, բացառել լիցենզավորված անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը:

Մեծածավալ աշխատանք է կատարվել նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մի շարք պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական կառավարման այլ մարմինների կողմից մշակված տասնյակից ավելի օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկման և համապատասխան առաջարկությունների ու դիտողությունների ներկայացման ուղղությամբ:

### *Lիցենզավորում*

Հանձնաժողովը 2003 թվականի ընթացքում ստացել է 22 լիցենզավորման հայտեր, որոնց քննարկումներից հետո տրվել են գաղամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, բնական գազի բաշխման, բնական գազի փոխադրման՝ մեկական, փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման, էլեկտրական էներգիայի արտահանման, էլեկտրաէներգետիկական համակարգում ծառայության մատուցման՝ երեքական, փոքր

հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ չորս, ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման, բաշխման՝ վեց լիցենզիաներ:

Ստացվել են լիցենզիաների գործողության ժամկետների երկարաձգման վերաբերյալ 12 հայտեր, որոնք բավարարվել են, ինչպես նաև նախկինում տրված լիցենզիաների գործողությունները դադարեցնելու վերաբերյալ 9 դիմումներ, որոնք հիմնականում վերաբերել են վերը նշված ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման լոկալ համակարգերը կարգավորման դաշտից դուրս բերելուն, արտադրված էլեկտրական էներգիան սեփական կարիքների համար օգտագործելուն և ընկերության հիմնադրի փոփոխությանը:

Հայտերի և դիմումների ուսումնասիրության արդյունքում ընդունվել են հանձնաժողովի համապատասխան որոշումներ, տրված գործունեության լիցենզիաների համար մշակվել են գործունեության պայմաններ:

2003 թվականի ընթացքում հանձնաժողովի կողմից լիցենզիաների տրամադրման, դրանց գործողությունների ժամկետների երկարաձգման համար տուրքերի գանձման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է փոխանցվել շուրջ 230 մլն դրամ պետական տուրք:

## **Սակագնային քաղաքականություն**

### **1. Էներգետիկայի բնագավառ.**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովը մեծածավալ աշխատանք է տարել էներգետիկայի բնագավառում սակագնային քաղաքականության կատարելագործման և սակագների սահմանման իրավական ու նորմատիվային բազայի բարելավման ուղղությամբ: Լրամշակվել և հաստատվել է էներգետիկայի բնագավառում 1998 թվականից գործող էլեկտրական էներգիայի սակագների սահմանման ու վերանայման կարգը, որով հստակեցվել և պարզեցվել են բնագավառում սակագների սահմանման ու վերանայման գործընթացները, հաստատվել են հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի ձևերը և ցանկը: Ընդունվել է փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման այնպիսի մեթոդիկա, որը նվազեցնում է կարգավորման ռիսկը և փոքր հիդրոէներգետիկայի զարգացման համար ապահովում բարենպաստ ներդրումային մթնոլորտ: Մասնավորապես, փոխառու միջոց-ների ներգրավմամբ կառուցված հիդրոէլեկտրակայանների համար այդ միջոցների վերադարձի (վարկի մարման) ժամկետում կարող են կիրառվել մաշվածության

ավելի բարձր նորմաներ, ինչպես նաև նշված մեթոդիկայում ամրագրված է դրույթ, ըստ որի սահմանված սակագները առնվազն հինգ տարի հանձնաժողովի նախաձեռնությամբ չեն կարող վերանայվել:

Հանրապետությունում հիդրոէներգետիկայի զարգացումը խթանելու նկատառումներից ելնելով, հանձնաժողովը քննարկել և որոշում է ընդունել բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը մինչև 2016 թվականն առանց ավելացված արժեքի հարկի 4,5 ԱՄՆ ցենտ/կՎտժ-ին համարժեք դրամ սահմանելու վերաբերյալ:

Վերանայվել են «ԶորաՀԷԿ» ՓԲԸ-ի հիդրոէլեկտրակայանից, Զերմուկ, Ամրակից և Շաքի փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագները: Սահմանվել են նոր կառուցված «Այգեծոր» և «Գորիս» փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագները:

Հաշվի առնելով, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի միջուկային վառելիքի գծով պարտավորությունների մարման նպատակով «Սևան-Հրազդանյան կասկադ» ՓԲԸ-ի գույքային համալիրը հանձնվել է ռուսական «RAO NORDIC» ընկերությանը՝ ներդրված գումարը ոչ ավելի, քան հինգ տարում վերադարձնելու պայմանով, 2003 թվականին վերանայվել է Սևան-Հրազդանյան կասկադից առաքվող էլեկտրական էներգիայի երկրորդ սակագինը, որի հաշվարկային մեծությունը միադրույթ համակարգում նախկին 4,65 դրամ/կՎտժ-ի դիմաց կազմում է 11,96 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

Վերանայվել են նաև 2003-2004 թվականների ծմբան ժամանակաշրջանում զերմային էներգիա մատակարարող ընկերությունների կողմից իրականացվող կենտրոնացված զեռուցման սակագները:

Հաշվի առնելով կենսազանգվածի էներգիայի օգտագործման բնապահպանական նշանակությունը շրջակա միջավայրի առողջացման առումով և նպատակ ունենալով խրախուսել էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործման ոլորտում տեղական և արտասահմանյան ներդրումների ներգրավումը, «Քաղաքային պինդ թափոններ-կենսազագ-էլեկտրաէներգիա» տեխնոլոգիական շրջափուլով գործող էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկում ներդրողների սեփական միջոցների շահութաբերության նորման կայանի շահագործման առաջին յոթ տարիների համար սահմանվել է 20 % (հարկումից հետո), պայմանով, որ առաքվող

Էլեկտրաէներգիայի սակագինը չի գերազանցի 7 ԱՄՆ ցենտ/կՎտժ-ն՝ առանց ավելացված արժեքի հարկի:

Մշակվել և հաստատվել է էլեկտրաէներգետիկական շուկային լիցենզավորված անձանց կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկան, մշակվել են առաջարկություններ՝ էլեկտրական էներգիայի մանրածախ սակագների և բնական գազի մատակարարման համակարգի սակագների կառուցվածքների բարելավման վերաբերյալ: Առաջարկությունները բխում են այն սկզբունքից, որ յուրաքանչյուր սպառողի կամ սպառողների խմբի համար սահմանված սակագների միջոցով հատուցվեն մատուցված ծառայությունների համար համակարգում կատարված ծախսերը՝ նվազագույնի հասցնելով սպառողական խմբերի միջև խաչածև սուբսիդավորումը և ապահովելով արդարացի սակագների սահմանումը: Ներկայումս այս առաջարկությունները քննարկման, իսկ դրանց ներդրման մեխանիզմները մշակման փուլում են:

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տրամադրված էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները, համաձայն որի 2004 թվականի հունվարի 1-ից սակագնի հաշվարկում ներառվող էլեկտրաէներգիայի կորուստների մեծությունը նվազեցվելու է մինչև 17 %, հանձնաժողովը վերանայել է «Հայէներգո» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գործող 1,59 ԱՄՆ ցենտ/կՎտժ-ին համարժեք դրամի սակագնային մարժայի (վաճառվող և գնվող էլեկտրաէներգիայի սակագների տարբերությունը) մեծությունը իջեցնելով 1,5 ԱՄՆ ցենտ/կՎտժ:

Հանձնաժողովը սահմանել է արտահանման լիցենզիա ունեցող անձանց «Քարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագին՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար:

Սահմանվել են էլեկտրաէներգետիկական համակարգին օպերատորի ծառայության մատուցման սակագները՝ ներքին սպառման համար հաստատագրված ամսական վճարի տեսքով, իսկ արտահանման համար՝ միադրույթ սակագին՝ արտահանվող յուրաքանչյուր կՎտժ էլեկտրաէներգիայի դիմաց:

Համաձայն հանձնաժողովի կողմից հաստատած կարգի, 2003 թվականի ընթացքում բազմակողմանիորեն ուսումնասիրվել և քննարկվել է

«Հայ՛՛ Ուսուսազարդ» ՓԲԸ-ի սակագների վերանայման հայտը: Հանձնաժողովը ընկերությունից պահանջել է սակագնի բարձրացման անհրաժեշտությունը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր, ստեղծել է համապատասխան մասնագետներից կազմված աշխատանքային խումբ, որն ընկերությունում ուսումնասիրել է սակագնի վերանայման հայտով ներկայացված ծախսերի, աշխատանքների իրականացման հրատապությունը և հիմնավորվածությունը: Արդյունքում, հանձնաժողովը 2004 թվականի հունվարի 9-ի որոշմանը «Հայ՛՛ Ուսուսազարդ» ՓԲԸ-ի կողմից ամսական մինչև 10,0 հազար նորմալ խորանարդ մետր սպառում ունեցող սպառողներին վաճառվող բնական գազի սակագինը սահմանել է 59,0 հազար դրամ, իսկ ամսական 10,0 հազար նորմալ խորանարդ մետրից ավելի սպառում ունեցող սպառողների համար վերահաստատել է 79,1 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ սակագին՝ սպառված յուրաքանչյուր 1000 նորմալ խորանարդ մետր բնական գազի դիմաց: Միաժամանակ, ընկերությանը հանձնարարվել է հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել 2004-2007 թվականներին գազամատակարարման համակարգի օրեգացմանը, այդ թվում՝ կորուստների նվազեցմանն ուղղված ներդրումային ծրագիր:

2003 թվականին ուսումնասիրվել և քննարկվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագնի վերանայման հայտը: 2004 թվականի հունվարի 27-ին սահմանվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը, որի հաշվարկային մեծությունը միադրույք սակագնային համակարգում նախկին 5,97 դրամ/կՎտժ-ի դիմաց կազմել է 6,37 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

## 2. Զրային համակարգ.

Մշակվել և հաստատվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման սակագների հաշվարկի ձևերը և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

2003 թվականի նոյեմբեր ամսին Երևանի «Զրմուղ-կոյուղի» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ներից ստացվել են սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման, ինչպես նաև «Ուռոգում-ջրառ» ՓԲԸ-ի կողմից ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին

մատակարարվող ոռոգման ջրի սակագների վերանայման վերաբերյալ հայտեր, որոնք հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել, քննարկել և 2004 թվականի փետրվար ամսին ընդունել է որոշում՝ խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման ծառայության մատուցման և ոռոգման ջրի մատակարարման սակագների վերանայման վերաբերյալ։ Ընդ որում, ոռոգման ջրի համար սահմանվել են ըստ գոտիների տարբերակված սակագներ, որոնք թույլ են տալիս առավել հստակ արտացոլել յուրաքանչյուր գետավազանային համակարգում ոռոգման ջրի համար կատարվող ծախսերը։

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայության մատուցման սակագների վերանայումը նպատակառուղղված է հաշվառման համակարգի բարելավման և ջրաչափերի տեղադրման հետևանքով սպառման ծավալների կտրուկ նվազման պայմաններում ընկերությունների ֆինանսական կենսունակության ապահովմանը, որը համակարգի անխափան շահագործման, անվտանգության բարձրացման, մատուցվող ծառայությունների որակի աստիճանական բարելավման կարևոր նախապայման է։

«Որոգում-ջրառ» ՓԲԸ-ի սակագնի վերանայումը պայմանավորված է ընկերություններում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխություններով, շահագործվող հիմնական միջոցների ավելացմամբ, իրավասությունների շրջանակների ընդլայնմամբ, ինչպես նաև սպառողների հետ հարաբերությունների առևտրայնացման գործընթացի խորացմամբ։

### ***Տնտեսավարող սուբյեկտների գործունեության ֆինանսատնտեսական վերլուծություն***

Եներգետիկայի բնագավառի և ջրային համակարգի ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական հաշվետվությունների և տեղեկատվությունների հիման վրա կատարվող վերլուծությունը, որպես հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը, հիմք է հանդիսանում ինչպես առանձին ընկերությունների, այնպես էլ ամբողջ բնագավառի և համակարգի գործունեության արդյունքների գնահատման, առկա հիմնախնդիրների բացահայտման, դրանց լուծմանն ուղղված հանձնաժողովի որոշումների կայացման և օրենքով հանձնաժողովին վերապահված կարգավորման այլ մեխանիզմների կիրառման համար։ Այն առանձնակի կարևորություն է ձեռք բերում սակագների սահմանման և վերանայման, ներդրումային ծրագրերի գնահատման վերաբերյալ հիմնավորված որոշումների

ընդունման և լիցենզիայի պայմանների վերահսկման գործառությաների իրականացման առումով:

Հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունները ներկայացրել են 2002 թվականի տարեկան և 2003 թվականի 9 ամիսների ֆինանսական հաշվետվությունները, որոնց հիման վրա կատարվել է նրանց ֆինանսական վիճակի վերլուծություն:

2003 թվականին հանձնաժողովը էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների համար հաստատել և ներդրել է ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգ, որը հնարավորություն կտա հստակ տարանջատել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում։ Այս հանգամանքներն էապես կնպաստեն ծախսերի մոնիթորինգի արդյունավետության բարձրացմանը և առավել հիմնա-վորված սակագների սահմանմանը։

2003 թվականի ընթացքում աշխատանքներ են տարվել նաև բնական գազի մատակարարման համակարգում կարգավորմանը վերաբերող հաշիվների և ենթահաշիվների մշակման ուղղությամբ, որոնց ներդրման վերաբերյալ որոշում կկայացվի 2004 թվականի վերջին։

Հանձնաժողովի մասնագետներն ուսումնասիրություններ են կատարել ջրային համակարգի մի շարք ընկերություններում, իրականացրել նրանց 2002 թվականի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն, որի արդյունքներն օգտագործվել են խմելու և ոռոգման ջրի սակագները սահմանելիս։

Էլեկտրաէներգետիկական համակարգի գործունեության մասին հանրությանը պարբերաբար իրազեկելու նպատակով հանձնաժողովի ինտերնետային էջում ([www.rcnm.am](http://www.rcnm.am)) շարունակաբար հրապարակվում են լիցենզավորված ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները։

### ***Լիցենզավորված գործունեության մոնիթորինգ***

Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի՝ հանձնաժողովի հիմնական գործառություններից մեկը կարգավորվող ոլորտի լիցենզավորված անձանց լիցենզիաների պայմանների կատարման վերահսկումն է, որն ուղղված է այդ ընկերությունների գործունեության պարբերաբար ուսումնասիրությունների և

համապատասխան վերլուծությունների միջոցով թերությունների հայտնաբերմանը և դրանց վերացմանը միտված անհրաժեշտ քայլերի ձեռնարկմանը։ Այս նպատակով 2003 թվականին լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգ և վերահսկողություն է իրականացվել կատարված և նախատեսվող ներդրումների արդյունավետության, շահագործման և պահպանման ծախսերի հիմնավորվածության գնահատման ուղղություններով։ Հանձնաժողովի հաստատած ժամանակացույցի համաձայն՝ գործունեության լիցենզիաների պայմանների կատարման մոնիթորինգ է իրականացվել «Հայ՛՛ Ուսգազարդ», «Հայէներգո», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ներում, որի ընթացքում ուշադրություն է դարձվել հիմնական միջոցների նպատակային ձեռքբերմանը և ընկերություններում տեխնիկական վերագինման գործընթացին, գնահատվել են էներգակայանքների, սարքավորումների հիմնական և ընթացիկ վերանորոգման-վերականգման աշխատանքների ծավալները և որակը, կատարված ծախսերի նպատակահարմարությունը, որոշվել են ծախսային բաղադրիչների այն օպտիմալ սահմանները, որոնք անհրաժեշտ են հուսալի և անվտանգ լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար։

Մոնիթորինգի արդյունքների հիման վրա վերոհիշյալ ընկերություններին հանձնարարականներ են տրվել լիցենզիայի պայմանների որոշ կետերի լիարժեք կատարումն ապահովելու վերաբերյալ։ Հատկապես ուշադրություն է դարձվել «Հայ՛՛ Ուսգազարդ» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակին ներկայացվող պահանջների կատարման համապատասխանությանը լիցենզիայի պայմաններին։ Մասնավորապես, «Հայ՛՛ Ուսգազարդ» ՓԲԸ-ին հանձնարարվել է մշակել և հանձնաժողովի հաստատմանը ներկայացնել ներդրումային կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, ինչպես նաև վերանայել գազամատակարարման համակարգում կորուստների հաշվարկի մեթոդիկաները։ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին հանձնարարվել է հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ընկերության կողմից կատարվող գնումների կարգը, էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում իրականացվելիք գործողությունների ծրագրերը, բաշխիչ ցանցում տեխնոլոգիական անխուսափելի կորուստների և ընկերության սեփական կարիքների համար ծախսվող էլեկտրաէներգիայի հաշվարկի մեթոդիկաները, ինչպես նաև ուշադրություն դարձնել սպառողների դիմում-բողոքների քննարկմանը, դրանց ըստ պատշաճի և սահմանված ժամկետներում

արձագանքմանը: Նշված գործընթացների համատեքստում մշտական հսկողություն է իրականացվում նաև տրված հանձնարարա-կանների կատարման ապահովման ուղղությամբ:

2003 թվականին պարբերաբար վերահսկվել է «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին տրված լիցենզիայի պայմանների կատարման ընթացքը: Հանձնաժողովը քննարկել և հաստատել է ընկերության ներկայացրած միջուկային վառելիքի և սեփական, տնտեսական կարիքների համար էլեկտրաէներգիայի, ջերմության և բնական գազի ծախսերի հաշվարկի մեթոդիկաները, որոնց հիման վրա հաշվարկված տվյալները հիմք են հանդիսացել «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի արտադրած էլեկտրական էներգիայի նոր սակագնի սահմանման համար:

Լիցենզավորված ընկերությունների աշխատանքի վերլուծության հիման վրա նրանց գործունեությունն ուղղորդվել է սպառողների էներգամատակարարման չհիմնավորված ընդհատումների կանխմանը, վթարային իրավիճակներում էներգամատակարարման ընդհատումների ժամանակահատվածի կրծատմանը, ինչպես նաև սպառողների նկատմամբ էներգամատակարար և գազամատակարար ընկերությունների կամայական վերաբերմունքի դրսնորումների վերացմանը:

Կատարված կապիտալ ներդրումների ծավալները, շահագործման և պահպանման ծախսերն իրատեսորեն գնահատելու համար հանձնաժողովն իրականացրել է նաև լիցենզավորման հայտերում ներկայացված ֆինանսատնտեսական փաստաթղթերի մոնիթորինգ:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է եղել փոքր հիդրոէներգետիկայի բնագավառը՝ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելով այդ բնագավառում ներդրումներ կատարելու ցանկություն հայտնող անձանց և ընկերություններին: Պատշաճ հսկողություն է սահմանվել փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից լիցենզիայի պայմանների կատարման ընթացքին: Լիցենզիայի պայմանների որոշ կետեր թերի կատարելու, մասնավորապես, նոր ՀԵԿ-երի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը և ֆինանսական հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելու համար, հանձնաժողովի որոշմանը թվով չորս ՀԵԿ-եր նախազգուշացվել են:

Մշակվել և հաստատվել է էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգը, որով կանոնակարգվում են այդ ծրագրերի համաձայնեցման և

հաստատման գործընթացը, ինչպես նաև դրանց ներկայացվող պահանջները՝ ելնելով սպառողների դասակարգումից:

Բնական գազի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոններում ի հայտ եկած թերությունները վերացնելու և բացթողումները լրացնելու նպատակով մատակարարի, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության և սպառողների միության հետ սերտ համագործակցությամբ մշակվել են նոր կանոններ, որոնք նախատեսվում է գործողության մեջ դնել 2004 թվականին:

### ***Սպառողների հետ տարվող աշխատանքները***

Հանձնաժողովը սպառողների շահերի պաշտպանությունն իրականացնում է՝ դեկավարվելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» <<օրենքի պահանջով, ըստ որի հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի սկզբունքներից մեկը սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռումն է:

2003 թվականի ընթացքում սպառողներից ստացվել են 313 հարցադրում և բողոք, որոնցից 53-ը՝ գրավոր, 260-ը՝ իրատապ հեռախոսով, ընդ որում, 300-ը ստացվել է բնակիչներից, 13-ը՝ իրավաբանական անձանցից: Դրական լուծում են ստացել 149 հարցադրում և բողոք, 38-ում բերված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, 121-ի վերաբերյալ պարզաբանումներ են տրվել գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի մասին, 5 բողոքներ ներկայացվել են «Հայէլցանց» ՓԲԸ-ի վիճահարույց հարցերի հանձնաժողով:

Նպատակ ունենալով ակտիվացնել սպառողների հետ կապը, հանձնաժողովը նրանց հնարավորություն է ընձեռել իրենց բողոքներն ու առաջարկությունները հանձնաժողով ներկայացնել և պատասխան ստանալ էլեկտրոնային փոստի միջոցով ([info@rcnm.am](mailto:info@rcnm.am)) և նույն միջոցով տեղեկատվություն ստանալ կարգավորվող բնագավառների իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

Մշակվել է էլեկտրաէներգետիկայի բնագավառի սպառողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ուղեցույց, որը նախատեսվում է տպագրել և անհատույց տրամադրել սպառողներին:

Համատեղ աշխատանքն արդյունավետ դարձնելու նպատակով հանձնաժողովը և Հայէլցանցե ՓԲԸ-ն պարբերաբար, ամիսը մեկ անգամ, անցկացվող հանդիպումների ժամանակ քննարկում են նախորդ ամսվա ընթացքում սպառողներից ստացված բողոքները, ձեռնարկում օպերատիվ միջոցներ դրանց լուծումն ապահովելու ուղղությամբ:

### **Զանգվածային լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների հետ տարկող աշխատանքներ**

Հաշվետու ժամանակամիջոցում, մամուլի ծառայությունը, հրապարակայնության և թափանցիկության մասին օրենքով ամրագրված սկզբունքի համաձայն, պարբերաբար լուսաբանել է հանձնաժողովի գործունեությունը:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակվել է հանձնաժողովի 2002 թվականի գործունեության հաշվետվությունը: 2003 թվականի ընթացքում հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամները, աշխատակազի մասնագետները մի շարք հեռուստաընկերություններով և ռադիոկայաններով անհրաժեշտ պարզաբանումներ են տվել սակագների սահմանման, վերանայման, մատակարար-բաժանորդ փոխհարաբերությունների և բնակչությանը հետաքրքրող տարաբնույթ հարցերի վերաբերյալ, կազմակերպվել են հեռուստառադիոռեպորտաժներ, ուղիղ եթերներ՝ ինտերակտիվ կապով:

Հանձնաժողովի ընդունած կարևորագույն որոշումների, քննարկումների, սակագների սահմանման, էլեկտրաէներգիայի, բնական գազի զանգվածային անջատումների, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հետ կապված, էներգետիկական տարածաշրջանային խնդիրների, փոքր ՀԷԿ-երի վերաբերյալ պարբերաբար նյութեր են տպագրվել թերթերում, համապատասխան տեղեկատվություն է հաղորդվել լրատվական գործակալություններին: «Արմենպրես» լրատվական գործակալությունում հրավիրվել է մամուլի ասուլիս, որտեղ հանձնաժողովի նախագահ Ռ. Նազարյանը ներկայացրել է իր պաշտոնավարման հարյուր օրվա արդյունքները, պատասխանել լրագրողներին հետաքրքրող բոլոր հարցերին: Դեկտեմբեր ամսին «ՀայՈւսգազարդ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված սակագների վերանայման հայտի քննարկման առիթով հրավիրված նիստից հետո կազմակերպվել է մամուլի ասուլիս՝ 17 լրատվամիջոցների մասնակցությամբ:

Արդյունավետ աշխատանք է տարվել սպառողների շահերը ներկայացնող և այլ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ: Նրանց ներկայացուցիչները հրավիրվել են մասնակցելու հանրության համար հետաքրքրություն ներկայացնող հանձնաժողովի նիստերին և տարաբնույթ քննարկումների:

### **Գործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ**

1997 թվականից հանձնաժողովը Կենտրոնական, Արևելյան Եվրոպայի և Եվրասիայի անդամ Երկրների կարգավորող մարմինների ընկերակցության, իսկ 2000 թվականի դեկտեմբեր ամսից՝ հիշյալ տարածաշրջանի Երկրների կարգավորող մարմինների կողմից ստեղծված կարգավորող մարմինների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) անդամ է:

2003 թվականին հանձնաժողովի անդամներն ու աշխատակիցները ակտիվորեն մասնակցել են Բուդապեշտում, Ստամբուլում նշված ընկերակցության անցկացրած նախագահության նիստերին, Կիևում և Մոսկվայում սակագնային և լիցենզիոն կոմիտեների շրջանակներում կազմակերպած քննարկումներին, սեմինարներին, ինչպես նաև Բուդապեշտում կազմակերպած ամառային դասընթացներին: Հանձնաժողովի ներկայացուցիչը մասնակցել է ընկերակցության Սոֆիայում կազմակերպած էներգետիկայի բնագավառում գների աճի և բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրների վերաբերյալ կոնֆերանսին:

Հանձնաժողովի մի շարք աշխատակիցներ մասնակցել են ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) և Կրթության զարգացման ակադեմիայի (AED) կողմից Մադրիդում անցկացված քամու էներգիայի վերաբերյալ տարեկան համաժողովին, որտեղ նյութեր են ներկայացվել Եվրոպական մի շարք Երկրներում քամու էներգիայի օգտագործման փորձի ու զարգացման հեռանկարների վերաբերյալ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) շրջանակներում Սոֆիայում անցկացված «Հետաձգված միջուկային նախագծերի զարգացումը» թեմայով ՄԱԳԱՏ-ի փորձագետների խորհրդակցությանը, որտեղ քննարկվել է քաղաքական, տնտեսական, ֆինանսական կամ այլ պատճառներով մի շարք Երկրներում անավարտ մնացած ատոմային էլեկտրակայանների հետագա ձակատագրի հարցը:

Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են նաև Հռոմում անցկացված էներգետիկայի զարգացման միջազգային համաժողովին, Հանրային-մասնավոր համագործակցության ինստիտուտի (IP3-ի) շրջանակներում Վաշինգտոնում անցկացված ձեռնարկությունների առևտրայնացմանը վերաբերող դաշնթացներին, որտեղ քննարկվել են ջրամատակարարման ոլորտի ընկերությունների վերակառուցման և կարգավորման հիմնախնդիրները, ԱՄՆ-ի Քենտուկի նահանգի, Դելտա գազե ընկերության մատակարարած բնական գազի սակագների կառուցվածքի, հաշվառման մեթոդիկայի և ֆինանսական վերլուծության վերաբերյալ կազմակերպված սեմինարին:

Եզրափակելով ներկայացված հաշվետվությունը նշենք, որ հանձնաժողովը՝ համագործակցելով իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների, միջազգային կազմակերպությունների, խորհրդատվական ընկերությունների և հասարակական կազմակերպությունների հետ, շարունակում է կարգավորման իրավական դաշտի, սակագնային քաղաքականության մեթոդաբանության, կարգավորվող ընկերությունների գործունեության ֆինանսատնտեսական արդյունքների վերլուծության, մոնիթորինգի և լիցենզիաների պայմանների վերահսկողության մեխանիզմների հետագա կատարելագործման, ինչպես նաև կարգավորվող ոլորտների կառուցվածքային բարեփոխումների ուղղությամբ տարվող աշխատանքները:

### **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը**

Ստորև ներկայացվում են հանձնաժողովի 2003թվականի հաստատված և ճշգրտված բյուջեների ֆինանսավորման և փաստացի ծախսերի տվյալները.

N	Ծախսի անվանումը	Հաստատված բյուջեն/ հազ.դրամ/	Տարեկան ճշտված բյուջեն/ հազ.դրամ/	Ֆինանսավորում /հազ.դրամ/	Փաստացի ծախս /հազ.դրամ/
	Ընդամենը ծախսեր	131037.5	131037.5	131037.5	132326.4
1.	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ	93726.2	96226.2	96226.2	96226.2
2.	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	11673.9	11973.9	11973.9	11973.9
3.	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	592.0	1592.0	1592.0	1341.9
4.	Գույք և սարքավորումներ	-	200.0	200.0	199.9

5.	Գործուղումներ, ծառայողական ուղևորություններ	4940.0	342.9	342.9	342.9
6.	Տրանսպորտի պահպանման ծախսեր	2682.0	2958.0	2958.0	3258.5
7.	Կապի ծառայությունների վճար	1587.9	2943.1	2943.1	4250.3
8.	Վառելիքի և ջեռուցման ծախսեր	-	300.0	300.0	157.8
9.	Էլեկտրաէներգիայի ծախսեր	1830.0	2374.0	2374.0	2362.2
10.	Զրմուղ կոյուղուց օգտվելու վարձ	18.0	18.0	18.0	18.0
11.	Շենքի վարձակալության ծախսեր	11760.0	11085.3	11085.3	11085.3
12.	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարների կատարման ծախսեր	-	149.6	149.6	149.6
13.	Ներկայացուցչական ծախսեր	227.5	227.5	227.5	324.7
14.	Այլ ծառայությունների ձեռք- բերման ծախսեր	2000.0	647.0	647.0	635.7

Փաստացի ծախսերի գերազանցումը ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը պայմանավորված է հանձնաժողովի նոր շենքում կապի ծառայությունների ապահովման համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսերի գծով կրեդիտորական պարտքի առաջացմամբ:

ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 30-ի № 1357-Ա որոշման համաձայն, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հանձնաժողովին հատկացվել է 24900.0 հազ.դրամ, «Այլ ակտիվների՝ գույք և սարքավորումների ձեռքբերման ծախսեր» հոդվածով՝ 20000.0 հազ.դրամ, «Տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսեր» հոդվածով՝ 4900.0 հազ.դրամ:

Նախորդ տարիների պարտքը մարելու համար հատկացվել է 4363.4 հազ.դրամ: